

ՆԻԻԹ.- Ձեռնարկներ Պատանեկան եւ Երիտասարդական կազմակերպութիւններու

Համաձայն Արեւմտեան Թեմի աւանդութեան՝ ամէն տարի, ուսումնական տարեշրջանի աւարտին, տեղի կ'ունենան քանի մը նշանակալից միջոցառումներ, նախաձեռնուած Թեմի հետեւեալ կազմակերպութիւններուն կողմէ.-

ա) Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութիւն (ACYO = Armenian Church Youth Organization, www.acyo-wd.org),

բ) Քրիստոնեայ Երիտասարդաց Առաքելութիւն դէպի Հայաստան (CYMA = Christian Youth Mission To Armenia, www.cyma-wd.org), եւ

գ) Ամառնային Ճամբար (Summer Camp, www.hyecamp.com):

Այս տարի, 2009ի ծրագիրներն են հետեւեալները.-

. Մայիս 22-24, 2009ին, Ֆրեվնոյի մէջ, տեղի ունեցան Արեւմտեան Թեմի տարեկան Մարզական Խաղերը (Sports Weekend), որուն մասնակցեցան շուրջ 200 մարզիկներ. միջոցառում մը, որ այս տարի կը համախմբէր նաեւ Երիտասարդաց ա՛յլ կազմակերպութիւններու մարզիկներ ալ: Խաղերը կազմակերպուած էին ACYOի եւ WAAA (Western Armenian Athletic Assosiation)ի հետ միասնական աշխատանքով:

. 2009ին CYMAն չորս շաբաթով յատուկ ուխտագնացութիւն մը կազմակերպած է դէպի Հայաստան՝ Յունիս 30 – Յուլիս 31 թուականներուն: Առաջին երկու շաբաթներու ընթացքին, խումբը պիտի շրջագայի՝ այցելելով հնախօսական եւ ա՛յլ տեսարժան վայրեր, իսկ յաջորդ երկու շաբթուան ընթացքին՝ խումբը բարեգործական լուրջ ծառայութիւն մը պիտի կատարէ՝ վերակառուցանելով ընտանիքի մը աւերուած բնակարանը: Խումբը պիտի առաջնորդէ ու ղեկավարէ Թեմիս Երիտասարդաց Վարիչ՝ Արժն. Տ. Աւետիս Քհնյ. Աբովեան:

. Արեւմտեան Թեմի Ամառնային Ճամբարը կարեւոր առաքելութիւն մըն է Թեմի պատանիներուն համար: 2009ի ամառնային ճամբարի թուականներն են Յուլիս 19-Օգոստոս 15, 2009 (չորս շաբաթ): Այս թուականներուն՝ ընդհանրապէս ճամբար կը հաւաքուին Արեւմտեան Թեմի բոլոր եկեղեցիներու պատանեկան խումբերը:

Հայ Առաքելական Եկեղեցին այս ձեւով ալ ստանձնած է նոր սերունդի կրօնական, ազգային ընտանեկան եւ տոհմային շար կարեւոր դաստիարակութիւնը: